

## ՄԱՍԼՈ ՅԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 28, 2016թ.

Երևան

### **Մրցունակության համաշխարհային զեկուլյցի համաձայն Հայաստանն իր մրցունակությամբ 79-րդն է աշխարհի 138 երկրների մեջ**

Համաշխարհային մրցունակության զեկուլյցում երկրների մրցունակությունը գնահատվում է Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ ցուցիչ) միջոցով: Այն մշակվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից և հաշվարկվում է մրցունակության 12 հենասյունների հիման վրա:

Ցուցիչի հաշվարկման հիմքում ընկած են վիճակագրական տվյալներ և ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքները: Ընկերությունների ղեկավարների ամենամյա հարցումն իրականացվում է ՄՅԶ-ում ներառված երկրներում՝ ՀՏՖ Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպությունների կողմից:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես ՀՏՖ Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր Հայաստանում, ներկայացնում է «Համաշխարհային մրցունակության զեկուլյց 2016/17»-ի հիմնական արդյունքները:

2016/17 զեկուլյցի արդյունքներով առաջատար երեք երկրները շարունակում են մնալ Շվեյցարիան, Սինգապուրը և ԱՄՆ-ը: Մրցունակությամբ առաջին հնգյակում են նաև Լիդերլանդները և Գերմանիան:

ԱՊՀ տարածաշրջանի (ներառյալ Վրաստանը) երկրների խմբում առաջընթաց են արձանագրել Վրաստանը (7 կետով), Ադրբեջանը (3 կետով), Տաջիկստանը (3 կետով) և Ռուսաստանը (2 կետով): Հայաստանը գրանցել է առաջընթաց 3 կետով: Չգալի հետընթաց են արձանագրել Մոլդովան (16 կետով) և Ղազախստանը (11 կետով):

### **Համաշխարհային մրցունակության համաթիվ**

	<b>2016-2017 138 երկրների շարքում</b>	<b>2015-2016 140 երկրների շարքում</b>	<b>Փոփոխություն</b>
Ադրբեջան	37	40	↑ 3
Ռուսաստան	43	45	↑ 2
Ղազախստան	53	42	↓ 11
Վրաստան	59	66	↑ 7
Տաջիկստան	77	80	↑ 3
<b>Հայաստան</b>	<b>79</b>	<b>82</b>	<b>↑ 3</b>
Ուկրաինա	85	79	↓ 6
Մոլդովա	100	84	↓ 16
Դրոլդստան	111	102	↓ 9

2016-2017 թթ. Մրցունակության համաշխարհային զեկուլյում (ՄՀ2) Հայաստանը 138 երկրների մեջ գրավում է 79-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ դիրքը բարելավելով 3 տեղով: Չզալի առաջընթաց են գրանցել Նորարարություն, գործարարության կատարելագործվածություն և ինստիտուտներ հենասյունները: Որոշ դրական փոփոխություններ են գրանցել նաև ապրանքների շուկայի արդյունավետություն, ֆինանսական շուկայի զարգացվածություն, տեխնոլոգիական պատրաստվածություն և աշխատուժի շուկայի արդյունավետություն հենասյունների ցուցանիշները: Միևնույն ժամանակ վատթարացել են մակրոտնտեսական միջավայր և շուկայի չափ հենասյունների ցուցանիշները: Մակրոտնտեսական միջավայրի վրա բացասաբար են ազդել գնաճի և պետական բյուջեի պակասուրդի բարձր մակարդակները:

### Հայաստանի մրցունակության հենասյունների փոփոխությունները

ՀԱՄ հենասյունները	ՀԱՄ 2016-17 տեղ	ՀԱՄ 2015-16 տեղ	ՀԱՄ 2014-15 տեղ	Փոփոխություն 2015-16-ի նկատմամբ
	138 երկրների շարքում	140 երկրների շարքում	144 երկրների շարքում	
Ինստիտուտներ	66	76	72	↑ 10
Ենթակառուցվածքներ	82	82	78	0
Մակրոտնտեսական միջավայր	88	72	77	↓ 16
Առողջապահություն և տարրական կրթություն	93	95	99	↑ 2
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	71	72	75	↑ 1
Ապրանքների շուկայի արդյունավետություն	45	50	64	↑ 5
Աշխատուժի շուկայի արդյունավետություն	55	58	74	↑ 3
Ֆինանսական շուկայի զարգացվածություն	90	94	97	↑ 4
Տեխնոլոգիական պատրաստվածություն	71	75	71	↑ 4
Շուկայի չափ	120	116	118	↓ 4
Գործարարության կատարելագործվածություն	81	97	93	↑ 16
Նորարարություն	87	107	104	↑ 20

Բիզնես սկսելու հետ կապված գործընթացների քանակը և ժամկետները հաստատուն կերպով մնում են Հայաստանի ուշագրավ առավելությունների շարքում: Հայաստանի ուշագրավ առավելություններին են դասվում նաև հարկման ցածր բեռը և աշխատանքի ընդունման/հեռացման ճկունությունը: Մրցակցային թերություններն այնպիսի կարևոր ոլորտներում են, ինչպիսիք են ֆինանսավորումը տեղական կապիտալի շուկայի միջոցով, նավահանգստային ենթակառուցվածքի որակը (այն երկրները, որոնք չունեն ելք դեպի բաց ծով, գնահատում են ամենամոտ նավահանգիստը), արտաքին շուկայի չափի համաթիվը:

## Հայաստանի մրցունակության առավելություններն ու թերությունները

Ուշագրավ առավելություններ	Տեղ	Ուշագրավ թերություններ	Տեղ
ՁԻԱՐ-ի տարածվածություն, % չափահաս բնակչության մեջ	1	Նավահանգստային ենթակառուցվածքի որակ	122
Նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործընթացների քանակ	3	Արտաքին շուկայի չափի համաթիվ	121
Նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ օրերի քանակ	9	Ֆինանսավորումը տեղական կապիտալի շուկայի միջոցով	119
Հարկման դրույք, % չահույթից	12	ՀՆԱ, գնողունակության պարիտետով հաշվարկված, մլրդ ԱՄՆ դոլար	118
Աշխատանքի ընդունման ու հեռացման պրակտիկա	19	Ներքին շուկայի չափի համաթիվ	118

Հայաստանը շարունակում է մնալ արդյունավետության վրա հիմնված փոկում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մեծության շնորհիվ (3,534 ԱՄՆ դոլար, 2015 թ.):

Մրցունակության համաշխարհային սույն զեկույցի հիմնական բացահայտումներն են.

- տնտեսությունների բացության աստիճանի կրճատումը վտանգում է աճը և բարեկեցությունը:
- դրամավարկային խթանիչ միջոցները բավարար չեն կայուն աճ ապահովելու համար և պետք է զուգորդվեն մրցունակության բարեփոխումներով:
- 4-րդ արդյունաբերական հեղափոխությունը ամբողջապես փոխում է տնտեսությունների զարգացման տրամաբանությունը:

### Հայաստանի տնտեսական իրականությունը

Հետզհետե մային վերականգնումից հետո՝ 2013թ. -ից Հայաստանի տնտեսությունը հայտնվել է դանդաղ աճի իրավիճակում: Տնտեսության առաջատար ոլորտների առաջին եռամսյակում գրանցած աճի համեմատաբար բարձր տեմպը զգալիորեն նվազել է 2-րդ կիսամյակում:

Վերջին 7 տարիներին արտահանման աճի տեմպը գերազանցել է ներմուծմանը, սակայն այն անընդհատ նվազել է և գրանցել 4,4 տոկոս անկում 2015թ-ին: 2016թ. -ի առաջին 7 ամիսներին նկատվել է արտահանման աճի դրական դինամիկա:

Օտարերկրյա ներդրումների ծավալների անընդհատ նվազող տեմպն ազդանշան է երկրի ցածր ներդրումային գրավչության և աճի հնարավորությունների սահմանափակության վերաբերյալ:

Կորպորատիվ սեկտորի պարտքով բեռնվածության աստիճանի բարձրացման պատճառով նկատելի են ֆինանսական առողջության խնդիրներ: Բանկերի չաշխատող ակտիվների կշիռը, անընդհատ աճելով վերջին 3 տարիներին, հասել է 8,4 տոկոսի:

Պետության կողմից արտաքին ֆինանսական միջոցների ներգրավման կարողությունը խիստ սահմանափակվել է՝ պարտքային բեռի ՀՆԱ նկատմամբ 50% սահմանաչափին հասնելու պատճառով:

## **Հայաստանի տնտեսական կայուն և նշանակալից աճի ապահովումը կրիտիկական է**

Մրցունակության Եական բարձրացման համար անհրաժեշտ է տարեկան մոտ 3-4% աշխատանքի արտադրողականության աճ:

Նման արտադրողականության աճի պայմաններում՝ գործազրկության կրճատումը և արտագաղթի կասեցումը պահանջում է ՀՆԱ-ի տարեկան ևս 4-5 տոկոսային կետի աճ:

Այս երկու խնդիրների միաժամանակ լուծումը կարող է իրականանալ նվազագույնը 7-8% տարեկան տնտեսական աճի պայմաններում:

Տնտեսական քաղաքականության օրակարգը պետք է ձևավորվի աճի հետևյալ սահմանափակումների վերացմանն ուղղված նախաձեռնություններով:

### **1. Անկատար մրցակցային միջավայր**

- Հարկային, մաքսային վարչարարության, մրցակցության պաշտպանության և պետական գնումների քաղաքականության միջոցով հավասար հնարավորությունների ապահովում

### **2.Նոր բիզնես հնարավորությունների բացահայտման պակաս**

- Նոր տեխնոլոգիաների հիման վրա արդյունաբերական զարգացման ռազմավարություն նոր բացվող հնարավորությունների համատեքստում
- Օտարերկրյա ներդրումների ներգրավման նոր մոտեցումներ

### **3. Մարդկային կապիտալի ոչ բավարար որակ**

- Տեխնոլոգիական նոր դարաշրջանին համապատասխանող լայնամասշտաբ կրթական բարեփոխումներ
- Մասնագիտական հայրենադարձություն

### **4. Միաչափ ֆինանսական համակարգ**

- Կապիտալ շուկաների զարգացման խթաններ

## **«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն**

«Տնտեսություն և արժեքներ»-ը՝ «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը, մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

Երևան 0010, Մելիք Ադամյան 2/1  
Հեռ.՝ +37410 546434  
Էլ-փոստ՝ [info@ev.am](mailto:info@ev.am),  
[www.ev.am](http://www.ev.am), [www.evconsulting.com](http://www.evconsulting.com)